

ՀԵՌԱԽՈՍ ԳՐԱԲԻՆ ԿԱՄ ԽՕՍՈՒՆ ՀԵՌԱԳԻՐ Ի ԲԱՐԻԶ


Հեռախօսն, հեռագրէն աւելի այս զարմանալի գործին, բնական պատմութեան գահիճներէն ելլելով՝ կը մտնէ փորձառական արուեստից ընդարձակ տէրութեան մէջ։

Եւմերիկա՝ հեռախօսական գործարանները (Téléphones exchanges), երենց պաշտօնը կը կատարեն այլ և այլ քաղաքներու մէջ, յորոց յիշենք, Նիւ Յոռք Շիդակոյ, Փիլադելֆիա, Պոսդըն, Վոշինկորոն, Նիւհէվրն, Ջինչինադի, Ս. Լուտովիկոս, Ս. Ֆուանչիսկոս, և այլն։

Այս հեռախօսական գործարանն, ուղղակի կամ իրենց գործակատարաց ձեռքով, զընկերագիրները երարու հետ կը հաղորդեցընեն, որոնք կը վերաբե-

րին վաճառականական ամեն դասու, սեղանաւորաց, նաւակազմից, արուեստանոցաց կամ գործատանց զիսաւորներու։ Ի նիւդակոյ, որ չորս և մինչև հինգ հարիւր հազար բնակչաց քաղաք է, հեռախօսական գործարանը, 3,200 ընկերակից կը համրէ։ Ի Նիւեոռք, գրեթէ 3,000, յորոց շատերը իրենց թղթակիցները ունին քաղելն 20 քիլոմէտր աւելի հեռու։ Ուրիշ քաղաքներուն մէջ գրեթէ ամեն տեղ հազարէն անդին կ անցնին։

Զարմանալու բան չէ եթէ Ամերիկա յառաջեց քան զիւրոպա զհեռախօս գործին առանձնականաց հաղորդակցութեանն յարմարցըներուն մէջ, վասն զի հօն հեռախօսն անցաւ արա-



գութեամբ տեսականէն՝ ի գործնական։ Սակայն հիմայ կարծես թէ եւրոպական երկիրները վաստրկիլ կը յանան իրենց կրտսընցուցած ժամանակնին, և միայն թարիզու վրայ խօսելով, ըստնք որ նոր ընկերութիւն մը (Compagnie des Téléphones) բացաւ, գրեթէ երեք ամիս կայ, գործարան մը նէօվ-աէք-բլդի-Շանի, թ. 66 ճամբուն վրայ, այսինքն է՝ վաճառականական թաղին կերպոնը։

Այս ընկերութիւնը բանեցուց շատ

մընոր գործիներ, որոնց մէջն կառերի (Gowen) հեռախօսը (տես պատկերն), որ առանց սինակներու կը բանի, ամենէն աւելի պարզն է, և արդիւնքը լաւագոյն։ Կառերի գործիքը հիմուած է Պէլին (Bell) պէս մետաղեայ փոքր տախտակի մոռնեցած թրթումանց վրայ, եւեկառամագնիտի մը հետզհետէ և արագ թրթումանց ենթարկելով, բայց զինքը իրեն համանաններէն զանազանով՝ եւեկառամագնիտին և թրթուի տախտակին տուած այլ և մեծու-

թեան չափերն են, ուսկից առաջ կու գայ հաղորդած ձայնից մեծազոյն սաստկութիւն մը՝ բերնէն խօսելու ժամանակ :

Բայց ունի նաև այս օգուտը որ կը պարունակէ յետո կոչելու նշանը, որուն ձեռքով հեռախօսական միջոցաւ իրարու հետ վերաբերութիւն ունեցող անձինքը, կրնան փոխանակաւ մէկմէ՛ կու իմացընել երբոր իրարու հետ կ'ուղեն խօսիլ:

Այս գործիքով սիւնակի պէտք չկայ, և ոչ ուրիշ տեսակ աւելորդ ծախուց . ինչպէս նաև աւրուելու վտանգը եթէ յանկարծ մոռցուած ըլլայ հսանգը ընդհատել - ուսկից առաջ կու գայ սիւնակին սպառիլը - հոս ամենելն տեղի չունի :

Գործիքը պատին վրայ կախուած իր ձեռվը կը յիշեցընէ անխոնաւական (ա. ուրութեան) օգաչափ մը, և զիւրաթեք խողովակի մը ծայրը զրուած ձայնարեր մ'ունի: Ենյ խողովակին մէջ փշելով, դիմացի կայարանին մէջ կը սկսի շարժիլ թրթռացող թիթեղ մը, որ կենդանի ձայն մը կը հանէ, և նյին կերպով պատասխան տուող անձը կ'իմացընէ որ պատրաստ է մտիկ ընելու և պատասխանելու :

Կեղրոնական գործատան նիստը շատ եղական է: Արակի մը պատնեռուն երկայնութեամբը զետեղուած են շատ մը որիշ կայաններ, յորոց իւրաքանչիւրը ունի իր նստարանն, իր դրասեղանն, իր հեռախօս գործին և ձայնական փող մը, պէտք եղած ժամանակը առ ականին հասած հեռախօսական ձայները զօրացընելու համար: Պատին վրայ փոխարկիչ պատկեր մը կախուած է, որ թիւեր ունի և կը ծառայէ իրարու հետ խօսակից անձանց հաղորդակցութիւնը հաստատելու համար: Կեղրոնական գործատունը կապուած է հաղորդիշ թելերով կամ հեռազբական թելերով, որ լուալիաց անցից մէջ կը ձգուին, իւրաքանչիւր ընկերով բնակութեան հետ: Զանազան գործակատարներ, որոնց ամեն մէկը որոշուած են ընկերա-

կցաց մասնական խումբի մը ծառայութեան, զիշեր ցորեկ կը կենան գործատան մէջ՝ ուշ գնելու ընկերակցաց կոչմանց և գործելու ըստ իրենց տուն տալուն:

Ամենայն ընկեր ունի իրեն յատուկ ստացուած շատ մը թիւեր փոխարկիչ պատկերին վրայ գրուած, ուր կը վերջանայ այն թելին ծայրը որ իրեն բնակութեանէն կ'ելլէ:

Տեսնենք ինչպէս 'ի գլուխ կ'ելլէ երկու ընկերակցաց միջի վերաբերութիւնը, ենթագրելով որ 7 թիւն ուզենայ խօսակցիլ 15 թիւույն հետ:

Զգործակատարը կանչելու համար, 7 թ. կը փշէ իր հեռախօսական գործույն մէջ և կը սպասէ պատասխանին: Իր կողմանէ գործակատարը կ'առնու 7 թիւուվ նշանուած հեռախօս գործին, կը փշէ զայն, և այս կերպով կ'իմացընէ իրեն պատրաստ ըլլալը: Այն ժամանակ 7 թ. ընկերը հեռախօսական համբով իրեն կ'ըսէ. « իմացուր 12 ր. բաժանորդին որ պէտք ունիմ իրեն և ետ խօսելուր »: Գործակատարը կ'առնու թիւ 12 հեռախօս գործին, բերնէն կը փշէ և կը սպասէ, յետոյ երբոր 12 թ. պատասխան կու տայ կոչմանը, իրեն կ'իմացընէ որ զնէ զայն ուղղակի 'ի հաղորդակցութիւն 7 թիւույն հետ: Կը կրկնէ ասոր նոյն ծանուցումը, յետոյ մասնաւոր կարգադրութեանց ձեռքով, կը միացընէ այն թելը որ կուգայ 12 թիւույն բնակութեանէն 7 թ. ընկերին թելին հետ: Այն ատեն երկու թեերն մէկ թել կը ձևացընեն, և երկու ընկերագիները կրնան ըստ կամն իրենց գործոցը վրայ խօսիլ, առանց ուրիշ որ և իցէ մարդ մը իրենց խօսքերը կերպով մ'իմանալու:

Կառւէրի հեռախօս գործին կը պարունակէ նաև նշան տալու մեքենայ մը. որ անհրաժեշտ կարեռ է, եթէ չեն ուղեր իւրաքանչիւր ընկերով գործակատար մը զնել, ծախք մը՝ որ կը կործանէ զլնկերութիւնը: Գործակատար մը, որ պիտի հսկէ երեսունի չափ գործեաց վրայ, համապատասխանող հաւասար

թուով ընկերաց, որոնք ամենքը կրնան զինքը կոչել մի և նոյն վայրկենին մէջ, գժուարաւ կրնայ գիտնալ թէ արդեօք որ գործիքէն ձայնն ելաւ : Այս անպատշաճութեան վրայ աշխատելով երելին Ատէր գտից, հնարեց աւելցը նելու կառէրի հեռախօսին գործիք մը, որուն ձեռքով կրցաւ ունենալ տեսանելի նշան մը — պատրասխանէ բառը — որ կ'երևայ պղտի պատուհանի մը մէջ որ իւրաքանչիւր ընկերաց թրւոյն տակ բացուածէ : Այս նշանը հեռախօս գործւյն մագնիսէն բռնուածէ, քանի որ գործիքը դադարման վի-

ճակի մէջ է, կամ իրարու հետ խօսակցութիւն մը ընելուն ժամանակ . միայն այն ատեն կը բաժնուի և կ'ինայ, երբ կը փշես՝ կրման նշանը զրկելու համար : Ուրեմն թուոյն ու պատասխանէ բառէն եր որ տեսաւ գործակատարը և իմացաւ ով զինքը կը կանչէ :

Երբոր 7 և 12 թիւերն կը լմնցընեն խօսակցութիւննին, կը փշեն մի և նոյն ժամանակ իրենց հեռախօս գործեաց մէջ, բառը կ'երևայ, և գործակատարը գիտէ որ հասեր է ժամանակը հաղորդակցութիւնը կտրելու և գործիքները դադրեցընելու:

Լուսագրական նոր յառաջադիմութիւն . — Ճարոնի մէջ դժնութեցաւ լուսագրական նոր յառաջադիմութիւն մը անձանօթ յերոպիկա, այն երկրի ջրգեղ (վեռնիճ) շինող արհեստաւորք դիտեցին որ իրենց ձեռագործական կիրառութեան նիւթերէն մին շատ զգայուն է լուսոյ ազդեցութեան . և ասիկայ է գորշ-կարմրագոյն բաղկացութիւն մը, որ մոմի սերտութիւն ունի, և երբ կը զրուի քանի մը ժամ' արեւ գակնային լուսոյ ազդեցութեան նեղընք քարի պէս կը պնդանայ : Այս գիւտիս ճարոնացի հեղինակն, առնելով այս նիւթս — որ հաւանականաբար մատագրութեական տեսակ մ'է, թէպէտ և ընդհակառակը կը հաստատեն — կը տարածէ զայն մետաղական թիթղան մը վրայ, և շուտով կը գնէ չչզգքական ապակւոյն ետև : Գրեթէ տասն և երկու ժամ այնպէս դրուած կը մնայ . առարկային պատկերը պնդացած կ'ըլլայ այն ժամանակն, մինչդեռ անոն մնացած մասունքը՝ որո՞ք լուսոյ ազդեցութիւնը չեն կրած՝ կակուղ կը մնան և փայլուն, այնպէս որ կամ խողանակով և կամ

ուրիշ մերենական գործողութեամբ մը կրնան վերցուիլ . թիթեղը կը ծառայէ նաև քարեղէն փորագրութեան տեղ : Այս գիւտիս հեղինակը այնպէս ծածուկ կը պահէ, որ դեռ անոր մանրամասն պատմութիւնն գեռ ևս լաւ ծանօթացած չեն մեղի :

Ապրակեայ մանած . — Գերմանիոյ մէջ, 'ի կանտէնքրայ, վիեննացի Ա. Բ. Ռուբենվէլ ջուլհակը, իր ապակւոյ գործատան մէջ ապակիով զանազան առարկաներ կը շինէ . զոր օրինակ, կրծկալք, զլիսարկք, փողպատք, քողք, և այլն : Ոչ միայն կը մանէ, այլ և հասարակաց առջին կը հիւսէ : Ինքը գիւրաբեկ ապակին դաշարուն թելի կը վերածէ, և գեղեցիկ և տաքցուցիչ զգեստներ կը շինէ, որոնց հետ կը խառնէ անցայ տրաղադրական նիւթեր, որով ապակւոյն բնութիւնը կը փոխուի : Կը շինէ նաև ապակիով սպիտակ կաշիէ գաստակագք, և կանանց ժամ, որ իրականէն աւելի գեղեցիկ են : Իսկ ապակիէ բուրդն, ճշմարտէն զրեթէ անկարելի է որոշել :